

գիպիք քան ուրիշներու : Բայց ասիկայ թարգմանչէն չի կախուիր, որովհետև որ մասերուն մէջ որ գծուար է հայերէնն, նոյնպէս կը գտնուի նաև յունարէնին մէջ . և ասոնցմէ ալ աւելի երբայական բնագրին մէջ, Յոբայ լեզուն, ըստ վկայելոյ արդի ուսրուներաց, Ս. Գրոց ուրիշ մասերէն շատ վար է . շատ բառեր կան որոնց մեկնութիւնը մինչև հիմայ չեն գտած, և շատերն ալ արաբական բազադութեամբ խառն են : Ասոր համար թէպէտ արդի գիտուններէն ոմանք ջանացին բառ առ բառ թարգմանութիւն մ'ընել, բայց ճար չեղաւ, և ստիպուեցան առաջնոց պէս տեղ տեղ իմաստը մեկնել, կամ նոյն թողուլ :

Իսկ հայերէն տաղաչափութեան վրայ ստնուած Յորը, որ Գեր. Եզուարդայ Ներակայ Արքեպիսկոպոսին ընտիր գրչին երկնաորութիւնն է, միակ է հայերէն թարգմանութիւնը լուսագոյն հասկընայու համար . գարձեալ ընթերցողը կը կարծէ որ Յոբայ բերանին աւելի յարմար էր այս տաղաչափութեամբ բանաստեղծութիւնը :

Եղան ալ որ Յոբայ այս իրթնութիւնը իրենց պատրուակ առնելով՝ ուզեցին Յոբայ գիրքը կանոնական գրոցմէ գուրս թողուլ, և կամ այլ ընդ այլոյ իմաստներ տալով մեկնաբանել : Բայց միշտ սասոնց դէմ կեցաւ Եկեղեցին, որ 'ի սկզբանէ հետէ Յոբայ գիրքը նախականոն գրոց մէջ ճանչցեր է և կը ճանչնայ :

ՋՐՀԵՂԵՂՆ ԵՒ ԲԱՐԵԼՈՒՄԱԿԱՆ ԱՒԱՆՌՈՒԹԻՒՆ

Թէպէտ և Ս. Գիրք աւանդած են մեզի ջրհեղեղի գիպուածը, և այն այն չափ ստոյգ է որչափ պատմունջ, բայց մեծապէս հետաքրքրական է և օգտակար գիտնալ թէ արդեօք ուրիշ ազգաց մէջ ալ կը գտնուի այս աւանդութիւնս, այն ազգաց՝ որ թէ՛ ժամանակաւ և թէ՛ տեղեաւ մօտ գտնուեցան : Վեր 'ի վերոյ նայելով ասիական ժողովրդոց պատմութեան, քիչ շատ հետքեր կը տեսնուին նոյն գիպուածին՝ իրենց կրօնական առասպելաց մէջ : Բաց ասկէ ունինք ձեռքերնիս երկու պատմութիւն ջրհեղեղին վրայ փաղդէացոց աւանդութենէ առած, զորս հասուցած

է մեզ Եւսեբիոս իր ժամանակագրութեանը մէջ : Այս աւանդութիւնը զարմանալի միաբանութիւն մ'ունի Յ. Գրոց պատմածին հետ, թէպէտ և անձանց անուններն փոխուած են : Այս աւանդութիւնս Յունաց ալ անցաւ Բերոսոս քաղզէացի քրմին ձեռքով, որ Սելևկոս Նիկանովրի ժամանակ թարգմանեց յունարէն և յանձնեց իր երկրին իշխողաց՝ Հայրենեացը աւանդութիւնը : Եւսեբիոս ուղղակի այս հեղինակէն առած չի գրեր, այլ անկէ ետև եկող պատմչաց՝ Արիւղեհնոսի և Աղքեսանդրի Բազմալիպի գրուածներէն : Այս երկու պատմութիւնը գիտնոց մեծ նիւթ եղաւ քննութեան և մեկնութեան :

Բարեւացիք և Ասորեստանեայք մեծ ու զօրաւոր ինքնակալութիւն մ'ունէին Ասիոյ մէջ . այլ այս մեծ տէրութեանց գործոց գրեթէ արձագանքն միայն հասած է մեզի . բայց որովհետև իրենց տէրութեան հիմնադրութիւնն անտարակոյս ջրհեղեղի ժամանակաց մօտ է, ուրեմն բնական է որ այսպիսի մեծ յեղափոխութեան յիշատակն ալ գտնուէր իրենց մէջ : Վերի յիշատակած Բերոսոսին աւանդութիւնը ըսածնուս մեծ հաւաստիք մ'է, բայց թէ որ ուզենամք բուն աղբիւրէն աւանդութիւնը փնտուել, պէտք է Բարեւացոց ու Ասորեստանեայք գրուածքները քննել :

Ծանօթ է գիտնոց որ այս ազգաց գիրքն սեպածև ըսուած գիրքն էին, և այս գրով շատ գրուածներ կը գրանուին Ասիոյ մէջ, մեր Հայաստան երկրէն հասնալ : Աւելորդ կը համարիմք խօսիլ նոս նոյն գրերուն վրայ . այս ալ յայտնի է որ եւրոպացի իմաստունք շատ աշխատեցան և կ'աշխատին տակաւին նոյն գրերը կարդալու . և որովհետև զը ժուարընթեռնըրի են, անոր համար իրենց սուած բացատրութիւնն ու թարգմանութիւնն ալ շատ անգամ մութ ու անիմանալի : Այս ալ կայ որ նոյն իսկ իմաստունք ամենքն ալ նոյնպէս չեն կարդար, և աւելի հետամուտ եղողն Անգղիացիք եղած են . Անգղիոյ մէջ շատ մը Ասորեստանէ ու Բարեւունէ բե-

բուած յիշատակարաններ կան սեպածև գրերով, որոնք անգղիացի արեւելագիտաց մեծ նիւթ եղած են ընթերցման . և մինչև հիմա եղած ախտատանաց ամենէն աւելի արդիւնք ցուցընողն Պ. Սմիթ անգղիացին եղաւ, յետ Պ. Ռադլինսոնի :

Պ. Սմիթ թէ ուրիշներուն և թէ իր անձամբ բերած բարեկրնական աղիւսներու վրայի գրուածները քննելով գտաւ ջրհեղեղին վրայ պատմութիւն մը, և թարգմանելով հրատարակեց : Այս գործոյ վրայ ամեն տեղէ մեծ գո. վութիւն և ուրախութիւն լսուեցաւ, որովհետև նոյնը ճամբայ պիտի բանար ուրիշ յիշատակարաններ ալ կարդալու ու հասկընալու :

Կարևոր կը համարուի՞ք քանի մը իօօք ըսել հօս այս յիշատակարանաց ձևոյն և գրելու կերպին վրայ, ըստ կարծեաց զիսնոց ոմանց, որք կ'ըսեն թէ Նիսուէի մէջ թագաւորական պալատին մօտ գտնուած դիւանն ու գրատունը շինուած է Ասուրպանիբալ (Սարգանարաղ) Ասորեստանեայց վերջին թագաւորին ժամանակ, և շատ օտար է մեր սովորական գրատանց դազափարէն : Այս գրատան գրքերն տափակ և քառակուսի թրծած աղիւսէ տախտակներ են, երկու կողմը քովէ քով և պզտի սեպածև գրերով գրուած, ու ամենուն վրայ թուանշան կայ . այնպէս որ եթէ բոլոր հաւասար քառակուսիները մէկտեղ միացնենք, գիրք մը կը ձևանայ . և կ'երևի թէ այսպէս ժողոված կը պահէին նոյն գրատան մէջ : Բարեւրնացիք ուրիշ տեսակ գիրք բռնէին, բայց թէ՛ և այս բրձուն ալիւսքս, Coctiles laterculi, ինչպէս Պլինիոս կը կոչէ : Բայց ասոնց վրայ գրելու համար, գրիչ կամ մելան չէին գործածեր, ինչպէս ուրիշ ազգեր պապիրի կամ մագաղաթի վրայ, այլ կաւի վրայ քանի որ դեռ չէր պնդացած կը փորելին գիրերը և յետոյ կ'եփէին, և այնպէս կը պահէին :

Հիմա այս յիշատակարանաց թարգմանութիւնը զանց ընելով զենեք բերու.

ստին աւանդութիւնը, որպէս զի տեսնուի թէ ինչպէս հաւատարիմ են թէ այն քաղղէացի քուրմը, և թէ նոր թարգմանիչը . և միանգամայն՝ որ է մեր նպատակը, թէ ինչպէս Ս. Գրոց պատմածին հետ կը միարանին, և կ'աւելցընեն անոր ճշմարտութիւնը :

Եւսերիտս Կեսարացին, ինչպէս առաջ ըսինք, այս աւանդութիւնը երկու պատմըաց գրքերէն կ'առնու և երկուքին գրածն ալ մէջ կը բերէ : Աղեքսանդր Բաղմալիպին գրածն այսպէս է .

« Ի վախճանել Ռոմարտեայ՝ նորին որդոյ Քսիսութեայ թագաւորել շարս ԺԲ . և առ նովաւ լինել մեծի ջրհեղեղին : Եւ 'ի գրի հարեալ մի ըստ միոյ՛է այսպէս պատմէ . կրողն, ասէ, նմա՛ի քուն յայտնել, զոր հայրն անուանեն Արամազդայ, և այլք՝ Ժամանակ, 'ի հնգետասաներորդում 'Եսիոս ամսեան՝ որ է Մարերի, մարդկան 'ի ջրհեղեղէն սատակել . հրաման տալ՝ զամենայն զառային և զմիջինս և զվերջինս մատենից փորել և դնել յԱրեգ քաղաքին Սիպարացոց : Եւս գործել և 'ի ներքս մտանել հանդերձ ազգականօք և կարևոր բարեկամօք . համբարել 'ի ներքս ռոճիկս և ըմպելիս, մուծանել և զազանս և թռչունս և չորքոտանիս, և ամենայն կալմամովք պատրաստ լինել 'ի նաւարկել : Հարցեալ թէ յո ուրեք արդեօք նաւարկիցէ, պատասխանի աւարեալ թէ առ դիսն աղօթս առնել, զի բարիք մարդկան լինիցին : Եւ ըստունգանէր գործել զգործ նաւագործութեանն . որոյ երկայնութիւն էր հնգետասան վտաւան և լայնութիւն երկու վտաւանք :

« Հանգերձեալ կազմեալ ըստ ամենայնի որպէս և առ հրաման, զկին և զորդիս և զկարևոր բարեկամս 'ի ներքս մուծանել : Ի հասանել ջրհեղեղին և վաղվաղակի ցածնուլ, թռչունս ինչ արձակել Քսիսութեայ, և չգտանել ուտել ինչ, և ոչ տեղի և դազար իջանելոյ, գարձեալ միւսանգամ առնուլ զնոսա՛ի նաւն . և յետ սակաւ ինչ աւուրց

դարձեալ արձակել այլ հաւս . և նոցա
 ևս միւսանգամ անդրէն 'ի նաւն գալ՝
 կառով թաթախ զմագիլուն բերեալ : Ա-
 պա երրորդ անգամ արձակել , և ան-
 դրէն միւսանգամ չգալ 'ի նաւն : Յայն-
 ժամ իմանալ Քսիտութեայ , եթէ յայտ-
 նեալ բացեալ է երկիր . քակել զկողմ
 մի ձեղձուան նաւին , և տեսանել եր-
 թեալ ինչեալ զնաւն 'ի լեառն ինչ :
 Ելանել կնաւ և դատերբ միով հանդերձ
 և ճարտարապետաւ նաւին , և երկիր
 պագանել յերկրի . բազին կանգնել և
 զոճ զից մատուցանել . և այնուհետև
 չիբ յայաց լինել նորքը հանդերձ որք
 ընդ նմա 'ի նաւէն ելանէին : Եւ որք
 անդէն 'ի նաւին մնային՝ և զլուսնէին
 բնդ Քսիտութեայ , ելեալ յետոյ խըն-
 դրէին զնա , և յանուանէ չրջէին , գո-
 չէին , կոչէին . Քսիտութեայ չերևեալ
 այնուհետև նոցա . բայց ձայն բարբա-
 ուոյ յողոցն եկեալ՝ պատուէր տայր ,
 թէ պարտ է նոցա դիւցապաշտո լինել ,
 և եթէ ինքն վասն դիւցապաշտութեան
 երթեալ բնակիլցն 'ի բնակութիւն դիցն .
 և կնոջն նորա և զստեր և նաւապետին
 'ի նոյն պատիւ վայելել : Եւ զու և պա-
 տուէր տալ նոցա՝ երթալ միւսանգամ
 'ի Բաբելոն . և թէ այնպէս ինչ հրա-
 մանք զիցն իցեն , նոցա երթալ 'ի Սի-
 պարացուց քաղաքէն փորել հանել
 զմատեանն որ ծածկեալ կայցեն անդ ,
 և տալ մարդկան . և թէ տեղին յորում
 վայրի ելեալ կային , Հայոց աշխարհ է :

« Եւ նոցա լուեալ զայն ամենայն՝
 զոճս զից մատուցանեն , և 'ի հետիոտս
 'ի Բաբելոն գնալ : Եւ 'ի նաւէն՝ որ չո-
 գաւ դադարեաց 'ի Հայս , և ցայժմ սա-
 կաւ ինչ մասն 'ի կորզուացուց լերինն
 'ի Հայոց աշխարհին մնալ նշխար ա-
 սեն . և ոմանց քերել բերել 'ի ծեփա-
 ծոյ նաւին նաւթոյ՝ 'ի բժշկութիւն և 'ի
 քնոց ցաւոց ինչ բժժանաց , Եւ նոցա
 երթալ և հասանալ 'ի Բաբելոն . փորել
 'ի Սիպարացուց քաղաքին , և զմա-
 տեանն հանել , և բազում քաղաք չի-
 նել , և մեհնանս զից կանգնել , և միւս
 անգամ զԲաբելոն նորոգել : »

Աբիւղենոսի պատմամն աւելի հա-

մատոտ է , բայց աւելի ճշգրտութիւն ունի
 հաւեր արձրկելու պատմութեանը մէջ .

« Եւ առ Եղովրեւեաւ , որ յետ նո-
 լայն թագաւորեաց Անողափոսն . յետ
 որոյ այլք տիրեցին և Քսիտութեայ , ո-
 ռում կռնոտ յառաջագոյն գուշակեաց
 լինել յաճախութիւն անձրեաց 'ի հին-
 գերորդում՝ Դեսիոս ամոյո որ է Մարե-
 ռի : Հրաման տայ զմատեանն ամե-
 նայն յԱրեգ քաղաք Սիպարացուց թա-
 գուցանել : Եւ իբրև Քսիտութեայ զայն
 'ի զուլս հանեալ վճարէր , մինչդեռ ա-
 ռագաստ ձգեալ նաւարկել 'ի Հայս կա-
 մէին , յանկարծակի հասանէին կառու-
 վարքն յԱտուծոյ : Յերրորդ աւուր
 յորժամ անձրեքն ցածուին , արձա-
 կէր հաւս ինչ 'ի նաւուց , դէտակն կա-
 լեալ՝ եթէ կարիցեն զերկիր փարա-
 տեալ 'ի բազմութենէ ջուց տեսանել :
 Եւ նոցա յաժեալ ընդ անհուն համա-
 տարած ծովն ծփանաց՝ չգտանէին ու-
 րեք ոտից դադար . անդրէն առ Քսիտու-
 թեայ յետս դարձեալ դիմէին . և զա-
 դարեալ այլ ևս երիտ աւուրս՝ դարձեալ
 արձակէր , և եկեալ կառով թաթախ
 զմագիլուն բերէին : Եւ անդէն վաղվա-
 դակի զիքն զնա 'ի մարդկանէ հետա-
 կորոյս առնէին . և նաւն երթեալ յաշ-
 խարհն Հայոց դադարէր . և 'ի փայ-
 տիցն դեղ օղնականութեան բնակաց
 աշխարհին պարգուէր : »

Բերոսոսին պատմածին վրայ կրնայ
 մէկը տարակոյս հանել , թէ արդեօք
 այս պատմութիւնը բողոքովն բարեւո-
 նական աւանդութիւն է՝ թէ հրէական
 ձայն մ'ալ կը լսուի : Այս տարակոյսը
 այս օրուան օրս աւելորդ կը համարուի ,
 և սուանդութիւնն՝ ստոյգ , ազգային և
 հին է , նոր գտնուած բաբելոնական
 յիշատակարաններով յայտնուած , որք
 թէ և մեր թուականէն եօթը դար ա-
 ռաջ միայն գրուած են , բայց աւան-
 դութիւնն շատ առաջ ալ կար նիւուէի
 մէջ :

Պ . Սմիթին քննած յիշատակարանն
 ութսուն հատ են , բայց երեք օրինակ
 կը բաժնուին , անոր համար ինքը ջա-
 նացեր է որ այս երեք օրինակէն մէկ

կատարեալ օրինակ մը ձևացնէ: Երեքն ալ հին բնագրի մը վրայէն օրինակուած են, որ կը գտնուէր Քաղզէացոց Ուրարի քաղքին մէջ, որ է Ս. Գրոց Որէք (Որէք ըստ մեզ) կամ Էրէք, յիշած Ներքովթայ քաղաքը, որ քուրմերուն մեծ ուսումնարան տեղն էր, և մինչև Ստրաբոնի ժամանակն ալ կար, և էր « քաղաք նամակաց » ըսուածն, յորում Քաղզէացոց թագաւորներն հաստատած էին ամենէն հին գրատունը: Ասուրպանիբային օրինակել տուածն այս գրատան մէջէն էր: Այս բնագիրը ըստ Պ. Սմիթի, Գրիստոսէ Ժի դար առաջ գրուած էր, և Մովսեսէն ալ հին: Զրհեղեղին պատմութիւնը իբրև գրուագ մը ուրիշ պատմութեան մէջ մտած էր, որ է երկայն պատմութիւն առասպելեալ անձի մը. որուն անունը մէկ գրով միայն նշանակած ըլլալուն, Պ. Սմիթ իր քովէն անուն մը գրաւ. իզտառչար կոչելով: Այս անունս կամ բերոստին Եւեքսիոսն է, որ ջրհեղեղէն ետև առաջին թագաւոր կը համարուի, և կեանքն հազարաւոր տարիներ տեւած կ'ըսուի, և կամ Ս. Գրոց Ներքովթան: Ասուրպանիբային պատմական յիշատակարանաց մէջ յայտնի ակնարկութիւն մը կայ. երբոր Ռեանէ կամ Դասնման քաղաքը՝ որ Ասորեստանեայց քաղաքներէն մէկն է, որուն շինութիւնը Ս. Գիրք Ներքովթայ կ'ընծայէ՝ « քաղաք որսորդի » մականուամբ կը կոչուի: Ասկէ զատ բարելոնական յիշատակարանաց մէջ չորս քաղաքը զիզտառչար թագաւոր կը համարին. որք են Բարելոն, Էրէք, Սուրիփախ? և Նիփուր. որոց երեքն կը գտնուին որոշ այն չորս քաղաքաց առուանց մէջ, Բարելոն, Որէք կամ Էրէք, Աքադ և քաղանէ, ուր Մինդոց գիրքն կ'ըսէ լինել « Սկիզբն թագաւորութեան » Ներքովթայ: Ասորեստանեայց յիշատակարանաց մէջ կը գտնուի Աքադ անունը, բայց ժողովրդեան անուն է և ոչ քաղաքի:

Դառնալով մեր պատմութեան, Պ. Սմիթին դիւցաղն իզտառչար, թուի

ըստ յիշատակարանաց՝ պատերազմող և քաջ թագաւոր մը. և իր գործող կենդրոնն ալ կ'ըլլայ Որէք քաղաքն, որ հիմա կը կոչուի Վարքա: Իզտառչար փեղեզուին յաղթելէն ետև թագ կը կապէ. և Խահդար (Աստարտ կամ Աստարող) թագուհոյն հետ կ'ուզէ առուանալ, որ նոյն է Ասողիկն Բարելացոց: Ինքն, թագուհին գեղեցկութեան, այրի մնացած էր ամուսնէն՝ որ կը կոչուէր՝ « Որդի կենաց » կամ « Որդի ոգոյ »: Իզտառչար երկայն ատեն թագաւորեցէն ետքը կը հիւանդանայ, և « կը վախնայ մահուանէ, մարդուս յետին թնամիէն »: Բարելոնացիք առանդութիւն մ'ունէին թէ Սիսիդ կամ Սիսիսթրոս (Քսիսուսթրոս) անուամբ նահապետ կայ որ առանց մեռնելու մահութեան անցեալ է: Իզտառչար միտքը կը դնէ որ երթայ փնտռէ այս անձը և իմանայ թէ ինչպէս անմահացաւ, որպէս զի ինքն ալ կարենայ այս առանձնաշնորհութիւնը ձեռք բերել: Տեսիլքով մը ճամբայ կ'ելլայ, և երկայն ատեն թափառելէն ետքը կը հանդիպի նաւափարի մը, որ կը կոչուէր Ուրնաւախ: Մէկտեղ ամիս ու կէս նաւանը, ուր կը կարծուէր Քսիսուսթրոսին բնակութիւնը: Երբոր այս երկու ճանապարհորդք մօտեցան Քսիսուսթրոսին, զինքը քնոյ մէջ գտան: Հօս յիշատակարանն կրճատեալ ըլլալով՝ յայտնի չէ թէ ինչպէս իզտառչար և Քսիսուսթրոս իրարու հետ տեսնուեցան. բայց կ'իմացուի թէ Քսիսուսթրոս իր կնոյը հետ իզտառչարէն հեռու էին գետով մը բաժնուած: Իզտառչար տեսնելով որ անկարելի է ջրէն անցնիլ, կ'աղաղակէ Քսիսուսթրոսին, իր տարակոյսը և կենաց ու մահուան վրայ խնդիրը լուծանել: Այս բանիս պատասխանը կրճատեալ է, միայն վերջի կտորը կայ ուր Քսիսուսթրոս կը յայտնէ մահուան ընդհանուր վճիռը: « Աստուածուհին Մամիթ, հաստիչ ճակատագրի, կարգեաց նոցա զօրհասն, նա ինքն եղ զմահ և զկեանս, բայց օր

մահուան անդիտոյի է ք. ասով կը լըննայ տասներորդ տարւտակն : Մետաւաններորդ տարւտակը կը սկսի իզոտուիլարիէն խօսքով, որ կը հարցընէ թէ ինչպէս անմահութեան հասաւ : Նահապետն իր այս պատասխանին մէջ կը պատմէ ջրհեղեղին պատմութիւնը, և իր այս առանձնաշնորհութիւնը կը համարի պտուղ բարեպաշտութեան : Թէպէտ և տեղ տեղ տողերն կրճատեալ են ու պակասաւոր, բայց պատմութեան ամբողջութիւնը անարատ մնացած է : Անանկ որ Գաիտութիւն խօսքը լինելէն ետքը, կը յաւելուն տարւտակէն թէ՛ իրօտուպար մեծամեծ քարեր կ'առնու, և պզտի բլրակ մը կը շինէ ՚ի յիշատակ այս դիպուածոց : Եւ ապա կը պատմեն իզոտուիլարիէն և Ուրիւմանիին խօսքերը և գործերն՝ իրենց դառնալուն ժամանակ : Խնդիրն է ցամաքով ընել այն երկայն ճամբան : Նոյնպէս կը պատմեն առիւծի մը հետ եղած կռիւը, և այնպէս կը լըննայ տախտակը :

Այս դիւցազին պատմութիւնն որ բարբերական քերթողութեան օրինակ մ'է, թէ իր գրութեան կերպովը և թէ նիւթովը շատ հետաքրքրական է . ուր կը տեսնուի ամեն մանրամասն պարագայից մէջ ալ մեծ նմանութիւն բերոսոսի պատմածներուն : Այս հեղինակին պատմածը պատմութեան կամխք կրնայ ըսուիլ, բոլոր քերթողական գոյներէն զատած : Պ . Սմիթ այս յիշատակարաններով կազմեց մովսիսական ջրհեղեղի պատմութիւնը, համեմատելով բերոսոսի պատմածին հետ . ուր տապանին շինողին անունը Գաիտութիւն կը կոչուի, և հրաման տուող աստուծոյն անունը կոտնոս : Ըստ բերոսոսի՝ տապանին լայնութիւնը երկու կողմանէ հինգ վտաւան էր, և թէ անոր կեցած տեղը Հայոց աշխարհն էր : Սեպաձև յիշատակարանն կը յայտնէ Ս . Գրոց համեմատ, թէ ջրհեղեղն երկնից պատիժ մ'էր մարդկանց մեղացը համար . այս բանս բերոսոսին մէջ կը պակսի : Յիշատակարանէն դժբախտաբար տապանին չափը կորսուած է, կոտրած

ըլլալով յիշատակարանին այն մասն, բայց ետքի բառերը կը յայտնեն որ չափը կանգնուի նշանակուած էր Ս . Գրոց նման : Բայց Ս . Գիրքը 50 կանգուն կը դնէ լայնութիւնը և 30 բարձրութիւնը . յիշատակարանը լայնութիւնն ու բարձրութիւնընոյն էր կ'ըսէ : Տապանին ծով իջեցընելը և ջուրը ներս ընդունիլը և յետոյ նաւթիւ ծեփելն, ոչ Ս . Գրոց և ոչ բերոսոսին աւանդածին մէջ կայ . բայց երեքն ալ կը միաբանին նաւուն բեռնաւորելուն վրայ, թէպէտ և տարբեր կերպով կը պատմեն . յիշատակարանը նաւուն մէջ օտար մարդիկ ալ կը մտցունէ Գաիտութիւնն ընտանեացը հետ, « Որդիք սպառազինութեան, ամենայն, և այլն » : Յիշատակարանը չի նշանակեր թէ երբ սկսած է ջրհեղեղն, բայց որչափ տեւած ըլլալուն վրայ նշանաւոր անհամաձայնութիւն մը կ'երեւի ասոր և Ս . Գրոց մէջ : Ըստ Ս . Գրոց ջրհեղեղն կը սկսի երկրորդ ամսուան քսան և եօթներորդ օրը, և տապանը Արարատայ վրայ կը նստի եօթներորդ ամսուան քսան և եօթներորդ օրը, և ջուրը յաջորդ տարւոյն առաջին ամսուն մետասաներորդ օրը կը ցամքի : Ընդհակառակն յիշատակարանը կը պատմէ թէ ջրհեղեղը սկսաւ մեղմանալ եօթներորդ օրը, և թէ թոչուններն արծրկելէն առաջ եօթն օր կեցաւ նաւն լերան վրայ : Բերոսոս այս նիւթիս վրայ բան չըսեր . բայց ելլալէն ետքը սեղան շինելը և զոհ մատուցանելը երեք հեղինակք ալ կը պատմեն :

Այս է ահա բարբերական յիշատակարանին պատմածը ջրհեղեղին վրայ : Բաց ասկէ ուրիշ յիշատակարաններ կը բանան մեր առջև բարբերական և քաղաքական աւանդութիւնները, հին դիւցազնական շրջանի մը պատմութիւնը, ուր կրօնական առասպելք խառնուած են հին ժամանակի դիպուածոց և քաղաքական յեղափոխութեանց հետ, ցեղից իրարու հետ կռիւներուն, որոց տեսարանն Եփրատայ ու Տիգրիսի ամիսները վրայ կը հանդիպի : Այս ամենայն անցք ժամանակաւ իջեցաբանաւ

կան բունաստեղծութեան կերպ մը կ'առնուն, ուր շատ տեղ մեծ նմանութիւն ունին Հնդկաստանի դիցաբանութեան հետ. վասն զի հօս ալ կը տեսնենք երկնային դիցազանց պատմութիւն, աստուածք կերպատրեալք իբրև նախկին թագաւորք, որոց գործքն և պատերազմներն, քաղաքներ ու տէրութիւններ հաստատելին կը պատմուին: Նոյն ատենի զիցազանց մէկն է այս մեր իդոլոռայալն, և մեր հօս դրած պատմութիւնն առանձին զատ դէպք մը չէ, այլ ուրիշ մեծ պատմութեան մը մասն, որոյ մէջ գրուած են իր քաջութիւնները, գործերը և իր կեանքը: Այս քաջութեանց մէկին ալ այս էր. Պուլ անուամբ հրէշ մը կար, որ երբեմն կ'ելլէր ծովէն, կ'ապակներ քաղաքը, և կը պատուէր իր կատաղութեան առջև ձգուած ազնիկները: Իդոլոռայալ միտքը կը գնէ ազատել անկէ քաղաքը: Իր որսորդը որ կ'անուանէր Սոյտու, կը խաւրէ այս հրէշին դէմ. որսորդն երկու կանանց ձեռքով կը խարէ հրէշը և ցամաք կը հանէ, ու հօն կը զարնէ կը սպաննէ: Այս քերթողական պատմութիւնն մեծ նմանութիւն ունի Պերսէոսի և Անտրոմիտեայ առասպելին հետ, և անտարակոյս այս մեր պատմած հրէշին դէպքը քրիստոնէութենէ ետքը դար առաջ Նինուէի մէջ կը կարգացուէր:

Այս ջրհեղեղի վրայ եղած յիշատակարանաց յայտնուելէն կրնայ հետևեցնել ընթերցողն, որ եթէ այսպէս ուրիշ յիշատակարաններ ալ ծանօթանան, կրնան լոյս մը տալ ջրհեղեղէն առաջ ու ետքի ժամանակաց դիպուածոց, որ զեռ լուսաւորութեան ու մեկնութեան կարօտ են: Շատ զիտնականք կը յուսան որ անդդիացի ասորազիտին աշխատութիւնն յաջողեցնէ այս փափաքս ալ:

Նարայեռն անուր. — Ոչ ամենուն ծանօթ է Նարայեռն անուան ծագումն: Բարեզու Արձանագրութեանց ձեմարանն վաստով հրապարակին սեան ընծայական գրութիւնը լատին լեզուի ուզելով թարգմանել, գրեց *Narajanus*, իբրև թէ յառաջ գար այդ անունը *nea polis* երկու բառերէ որ կը նշանակեն նոր քաղաք: Կիտեն յունագէտը որ Նարայեռն անունն նոյնպէս ձեռցած է ինչ որ *Sirajanus*, և թէ նշանակէ տաիւս հովիտ (*naros*, հովիտ. *leon*, առիւծ):

Այն սուրբն ուսկից յառաջ եկած է այս անունը և մտած է ՚ի Տօնացոյցս լատինաց և մտած էր ՄԱԼԵքսանդրիս Եգիպտացոց և նահատակեցաւ ՚ի Կրոնիզիտանոսէ: Իր տօնահանգէան սահմանուեցաւ ՚ի 15 օգոստոս ամսոյ, յաւուր վերափոխման Տիրամօր: Տիկինն Լեզիցիս Պոնաբարդէ իր երկրորդ որդին նոյն օրը ծնանելուն, ուզեց որ անորնոյն նահատակին անունը գրուի, և իրեն զօրաւ որ պաշտպանութեանը ընծայուի: Առաջին կայսերութեան տունն օգոստոսի 15 Պաղղիացոց հանդիսի օր մ'եղաւ, և Ս. Նարայեռն գրուեց Տիրամօր վերափոխման օրը:

Այն անմիտք որ կը զուարճանան ծննդաբաշխ աւուրց դուշակութեամբ և բաւոյց խաղարկութեամբ, գտան որ Նարայեռն անունը չորս մասն բաժնելով, կ'ելլայ յունական լեզուաւ իմաստ մը որ կը նշանակէ « Նարայեռն լինելով առիւծ՝ կործանիչ քաղաքաց » (*Ναπαλέον, ὠν, λεών, ἀπολέων, πάλειον*): Ինչպիսի՞ եղական նախագուշակութիւն:

Վիճակախաղարկիւք. — Եզիպտացիք ու Երրայեցիք ունէին իրենց վիճակախաղութիւնները. և վիճակն կը սահմանէր իւրաքանչիւր ցեղից կամ ընտանեաց այն դաշտը զոր պիտի մշակէր: Աւուրցանէ մեզ Հոմերոս որ յաղթելոց գէնքերն յաղթողաց կու տային ՚ի ձեռն վիճակահանութեան, և Վիրգիլիոս ինչպէս և Տակիտոս կը պատմեն, որ ՚ի Հոռով՝ ձրիատուր խաղուց տեսարանին լըննայէն ետքը, որք կը տրուէին Սատուական հանդիսից առթիւ, կը նշանակին ամբողջ մէջ փոքրիկ քառակուսի տախտակներ, *apophoro's* կոչեցեալ, որոց իւրաքանչիւրին վրայ նշանած էր պարզև մը ընծայեալ ՚ի բղելիսէ կամ ՚ի կայսերէ:

Ըստ պատմելոյ Սուետոնիոսի, Ալգոստոս կայսրն ամենաշահաւոր վիճակահանութիւններ կ'ընէր. Գեղարուեստից պաշտ-